ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ 2020-2023 ԹԹ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱԺԲԳ

ԵՐԵՎԱՆ-2019

ՆԱԽԱԲԱՆ

Պետական բյուջեի ընդունման և դրա կատարման նկատմամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին վերապահված վերահսկողական լիազորությունների արդյունավետ իրականացմանը նպաստելու ինպես նաև պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին մասնագիտական աջակցություն ու տեղեկատվություն տրամադրելու նպատակով 2015 թվականի մարտի 25-ի <<Ազգային ժողովի կանոնակարգ>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքով կազմավորվել է Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ (այսուհետ Բյուջետային գրասենյակ): Բյուջետային գրասենյակն իր գործունեությունը սկսել է 2016 թվականի հունվարի 16-ից և օժտված է գործառութային անկախությամբ:

Բյուջետային գրասենյակներն անկախ ֆինանսական ինստիտուտներ են, որոնք գործում են աշխաարհի չորս տասնյակից ավելի երկրներում: Բյուջետային գրասենյակների, որպես անկախ ֆինանսական ինստիտուտների, արդյունավետ գործունեության կարևորագույն սկսբունքներ են սահմանվել նրանց անկախությունն ու անկողմնակալ մասնագիտական գործունեությունը, որոնք միմյանց հետ գտնվում են անքակտելի կապի մեջ:

Բյուջետային գրասենյակը և նրա գործառույթները

Բյուջետային գրասենյակն իր գործունեությունն իրականացնում է իրեն վերաբերելի իրավական ակտերին համապատասխան:

Բյուջետային գրասենյակի գործունեության ընդհանուր համակարգումը և մշտադիտարկումը իրականացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը:

Բյուջետային գրասենյակն իր գործառույթներն իրականացնելիս օգտվում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների պաշտոնական փաստաթղթերից և տեղեկատվությունից:

Բյուջետային գրասենյակի գործառույթներն են՝

1. պետական բյուջեի նախագծում, պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունում բյուջետային մուտքերը և ելքերը ծրագրային և (կամ) այլ ձևաչափով ներկայացված փաստաթղթի վերաբերյալ տեղեկանքներ տրամադրելը.

2. Ազգային ժողովի մասնագիտական կարողությունների շարունակական զարգացում հանրային ֆինանսների ոլորտում, այդ թվում՝ ծրագրային բյուջետավորման ձևաչափի վերաբերյալ դասընթացների կազմակերպումը.
3. պետական բյուջեի նախագծի ամփոփ նկարագրի պատրաստումը, ինչպես նաև ճյուղային, ծրագրային, ոլորտային ամփոփ նկարագրերի և տեղեկանքների պատրաստումը.
4. պետական բյուջեի մասին օրենքի նախագծում փոփոխություններ կատարելու մասին առաջարկների ձևակերպմանն աջակցությունը՝ անհրաժեշտության դեպքում իրականացնելով հաշվարկներ, ինչպես նաև պետական բյուջեի մասին օրենքի նախագծում ընդունված առաջարկների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը՝ ըստ ծախսերի բյուջետային դասակարգման համապատասխան հոդվածի և պետական բյուջեի նախագծի աղյուսակի համարի.
5. պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը: Այդ նպատակով Բյուջետային գրասենյակն իրականացնում է պետական բյուջեի եկամուտների՝ ըստ հարկերի, տուրքերի, պաշտոնական դրամաշնորհների և այլ եկամուտների տեսակների, ինչպես նաև պետական բյուջեի ծախսերի և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների և պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրների առցանց դիտարկում՝ տվյալ տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի հավելվածների մանրամասնությունների մակարդակով.
6. պետական բյուջեի եկամուտների (այդ թվում՝ արտաբյուջետային միջոցների), ինչպես նաև պետական բյուջեով հատկացվող, հատկացված միջոցների (այդ թվում՝ արտաբյուջետային միջոցների) ծախսման և պակասուրդի (հավելուրդի) վերաբերյալ տեղեկանքների տրամադրումը.
7. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական հիմնական ցուցանիշների, պետական պարտքի վերաբերյալ տեղեկանքների տրամադրումը, Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի, այդ թվում՝ պետական բյուջեի վրա վարկերի սպասարկման ազդեցության և Հայաստանի Հանրապետությանն օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև այլ անձանց տրամադրած դրամաշնորհների վերաբերյալ տեղեկանքների տրամադրումը.
8. պետական բյուջեի մասին օրենքի նախագծի և պետական բյուջեի կատարման ընթացքում պետական բյուջեի եկամուտների, ծախսերի և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների, պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի), դրա ֆինանսավորման աղբյուրների, պետական բյուջեի պարտքերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական պարտքի, Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի, այդ

թվում՝ պետական բյուջեի վրա վարկերի սպասարկման ազդեցության և Հայաստանի Հանրապետությանն օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև այլ անձանց տրամադրած դրամաշնորհների վերաբերյալ հարցերի, հարցումների և հարցապնդումների ձևակերպմանն աջակցությունը.

9. պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության ամփոփ նկարագրի, ինչպես նաև պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության ճյուղային, ծրագրային, ոլորտային ամփոփ նկարագրերի և տեղեկանքների պատրաստումը.
10. պետական բյուջեի կատարման (եռամսյակային) ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած տեղեկանքի ամփոփ նկարագրի պատրաստումը.
11. Հաշվեքննիչ պալատի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումների, պետական բյուջեի կատարման վերաբերյալ և ընթացիկ եզրակացությունների մասին տեղեկանքների տրամադրումը.
12. իր կատարած աշխատանքների վերաբերյալ եռամսյակային և տարեկան հաշվետվությունները իրավասու մշտական հանձնաժողով ներկայացնելը: Տարեկան հաշվետվությունը տեղադրվում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում.
13. մշտական հանձնաժողովներին ծրագրային բյուջետավորման ներդրման և կատարելագործման աշխատանքներում աջակցելը:

Բյուջետային գրասենյակի գործառույթների իրականացումը

Բյուջետային գրասենյակն իրավասու՝ **Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային ոլորտի մշտական հանձնաժողով է ներկայացնում՝**

- պետական բյուջեի նախագծի և պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության ամփոփ նկարագրերը,
- պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած տեղեկանքների ամփոփ նկարագրերը:

Բյուջետային գրասենյակը պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին և խմբակցություններին՝

1) տրամադրում է՝

- տեղեկանքներ՝ պետական բյուջեի նախագծում, պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունում բյուջետային մուտքերը և ելքերը ծրագրային և (կամ) այլ ձևաչափով ներկայացված փաստաթղթի վերաբերյալ.
- պետական բյուջեի նախագծի ճյուղային, ծրագրային, ոլորտային ամփոփ նկարագրեր և տեղեկանքներ.
- տեղեկանքներ՝ պետական բյուջեի եկամուտների (այդ թվում՝ արտաբյուջետային միջոցների), ինչպես նաև պետական բյուջեով հատկացվող, հատկացված միջոցների (այդ թվում՝ արտաբյուջետային միջոցների) ծախսման վերաբերյալ.

- տեղեկանքներ՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական հիմնական ցուցանիշների, պետական պարտքի, ՀՀ-ում օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի, այդ թվում՝ պետական բյուջեի վրա վարկերի սպասարկման ազդեցության և Հայաստանի Հանրապետությանն օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև այլ անձանց տրամադրած դրամաշնորհների վերաբերյալ.
- պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության ճյուղային, ծրագրային, ոլորտային ամփոփ նկարագրեր և տեղեկանքներ.
- տեղեկանքներ Հաշվեքննիչ պալատի գործունեության տարեկան հաղորդման, ինչպես նաև պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունների մասին.
- տեղեկատվություն պետական բյուջեի նախագծում ընդունված առաջարկների վերաբերյալ՝ ըստ ծախսերի բյուջետային դասակարգման համապատասխան հոդվածի և պետական բյուջեի նախագծի աղյուսակի համարի.
- այլ տեղեկատվություն պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ:

2) աջակցում է՝

- պատգամավորներին և խմբակցություններին՝ պետական բյուջեի նախագծում փոփոխություններ կատարելու մասին առաջարկների ձևակերպման գործում՝ անհրաժեշտության դեպքում իրականացնելով հաշվարկներ.
- պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին և խմբակցություններին՝ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հարցերի, հարցումների և հարցապնդումների ձևակերպման գործում.
- մշտական հանձնաժողովներին՝ ծրագրային բյուջետավորման ներդրման և կատարելագործման աշխատանքներում:

Բյուջետային գրասենյակը հանրային ֆինանսների կառավարման ոլորտում Ազգային ժողովի մասնագիտական կարողությունների զարգացման նպատակով պատգամավորների և նրանց օգնականների, Ազգային ժողովի աշխատակազմի աշխատակիցների և մշտական հանձնաժողովների փորձագետների համար կազմակերպում է սեմինարներ, քննարկումներ, կլոր սեղաններ և ծրագրային բյուջետավորման ձևաչափի վերաբերյալ դասընթացներ:

Բյուջետային գրասենյակը քաղաքական իրադարձություններին և նպատակներին գնահատական չի տալիս: Բյուջետային գրասենյակի փորձագետը հրապարակային ելույթներում ցուցաբերում է քաղաքական զսպվածություն:

Բյուջետային գրասենյակի աշխատակազմը ակտիվորեն ներգրավված է «Հայաստանի Հանրապետությունում պետական ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագիր» ԵՄ բյուջետային ծրագրով Ազգային ժողովի մասով ամրագրված թիրախների, ինչպես նաև Պետական Ֆինանսների Կառավարման Համակարգի Բարեփոխումների իրականացման և մոնիթորինգի գործընթացներում:

Բյուջետային գրասենյակն իր գործունեության ընթացքում առաջնորդվելով բյուջետային գրասենյակի 2017-2019թթ զարգացման ռազմավարությամբ, որը կազմվել էր հաշվի առնելով շահառուների պահանջները և միջազգային առաջավոր փորձը, զարգացել է շահառուներին ապահովելով մասնագիտական աջակցությամբ և տեղեկատվությամբ: ~~Մասնավորապես,~~

~~1. Պատրաստվել և շահառուներին են տրամադրվել հաստակ, հակիրճ, պարզ և համապարփակ տեղեկատվություն պարունակող ամփոփ նկարագրեր և տեղեկանքներ, որոնք պարունակում են համեմատական վերլուծություններ, ինֆոգրաֆիկաներ և այլն,~~

~~2. Բյուջետային գրասենյակի կողմից պատրաստված տեղեկանքների և մատուցվող ծառայությունների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով իրականացվել են առանձին հանդիպումներ շահառուների հետ, օգտագործվել են հանձնաժողովների նիստերի և խորհրդարանի մասին պարբերական հեռուստատեսային հաղորդումների, Բյուջետային գրասենյակի պաշտոնական էջի ու սոցիալական ցանցերի հնարավորությունները,~~

~~3. Շահառուների պահանջմունքների բացահայտման, ինչպես նաև շահառուների պահանջմունքները բավարարելու նպատակով իրականացվել են շահառուների կարիքների գնահատում: Իր գործողությունների մեջ Բյուջետային գրասենյակը եղել է նախաձեռնողական և շարունակաբար պատրաստել ու տրամադրել է նոր արտադրանքներ ու ծառայություններ, այդ թվում՝ կազմակերպվել են սեմինարներ, կլոր սեղաններ, դասընթացներ՝ կիրառելով նոր մոտեցումներ,~~

~~4. Բյուջետային գրասենյակի կարողությունների զարգացման նպատակով աշխատակազմը մասնակցել է վերապատրաստման դասընթացների, ուսումնական և փորձի փոխանակման այցերի: Բացի այդ, Բյուջետային գրասենյակը ներգրավվել է Բյուջետային գրասենյակների Համաշխարհային գլոբալ ցանցի մեջ, միաժամանակ ակտիվ կապի մեջ լինելով Վրաստանի, Սլովենիայի, Շոտլանդիայի, Ավստրիայի, Ուելսի և Ուկրաինայի խորհրդարանների բյուջետային գրասենյակների հետ:~~

Բյուջետային գրասենյակն իր գործունեության ընթացքում իրագործելով 2017-2019թթ զարգացման ռազմավարությամբ սահմանված թիրախները միջազգային փորձագետների ուսումնասիրությունների արդյունքում գնահատվել է որպես **կայացած միավոր**, որը կարիք ունի զարգանալու դեպի ավելի բարձր մակարդակ:

~~Ընտրված ժամանակահատվածն է 2020-2023 թվականները:~~

Ռազմավարական նպատակ

2020-2023 թվականներին նախատեսվում է ունենալ գործառութային անկախությամբ և ինքնավարությամբ օժտված արդյունավետ գործող Բյուջետային գրասենյակ, որն անկողմնակալ և մասնագիտական տեղեկատվություն ու աջակցություն կտրամադրի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներին, խմբակցություններին, մշտական հանձնաժողովներին՝ նպաստելով հանրային ֆինանսների կառավարման արդյունավետության, վերահսկողության ու թափանցիկության

մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև ակտիվ համագործակցության մեջ կլինի մասնագիտական հանրության հետ:

Նպատակ 1. Արտադրանքներ և ծառայություններ (Products & Services)

Շահառուներին տրամադրվող արտադրանքների և մատուցվող ծառայությունների որակի էլ ավելի բարելավում, Ազգային ժողովում **գիտակցված պահանջարկով** պայմանավորված նոր պարզ, հստակ, բովանդակալից, ինֆոգրաֆիկաներ, ինչպես նաև **Բյուջետային գրասենյակի չեզոքությունը չխաթարող** վերլուծական (Ըստ <<Ուեսթմինսթեր հիմնադրամը հանուն ժողովրդավարության>> կազմակերպության միջազգային փորձագետների, ցանկացած այդպիսի վերլուծություն պետք է քաղաքական առումով չեզոք լինի և չպետք է պարունակի տնտեսական կանխատեսումներ կամ կարծիքներ) ու խորհրդատվական տարրեր պարունակող ամփոփ նկարագրերի և տեղեկանքների պատրաստում, հանրային ֆինանսների ոլորտում Ազգային ժողովի և անհրաժեշտության դեպքում մասնագիտական հանրության կարողությունների զարգացում

- Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հարկաբյուջետային կանոնների պահպանման վերաբերյալ տեղեկանքների պատրաստում (մշտադիտարկման իրականացում և դրա վերաբերյալ տեղեկատվության տրամադրում Ազգային ժողովի պատգամավորներին, խմբակցություններին, մշտական հանձնաժողովներին),
- Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների և խմբակցությունների կողմից հեղինակած Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման և ծախսերի ավելացման ~~վրա ազդեցության գնահատում՝~~ վերաբերյալ ~~**Բյուջետային գրասենյակի չեզոքությունը չխաթարող** վերլուծական խորհրդատվական-վերլուծական տեղեկանքների~~ կարծիքների պատրաստում,
- Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացություններից բխող հետհաշվեքննության վերաբերյալ տեղեկանքների տրամադրում,
- Շահառուներին տրամադրվող պարզ, մատչելի, բովանդակալից տեղեկատվություն և ինֆոգրաֆիկաներ պարունակող ամփոփ նկարագրերի և տեղեկանքների շարունակական կատարելագործում,
- Պետական բյուջեի կատարման վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության տրամադրում Ազգային ժողովի պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին և խմբակցութուներին,
- Պետական բյուջեի ծախսերի գենդերային ~~ուղվածության~~ զգայունության վերաբերյալ տեղեկանքների պատրաստում:

<u>Նպատակ 2</u> Շահառուներ և համագործակցություն

Շահառուների կարիքների, նրանց տրամադրվող արտադրանքների ու ծառայությունների վերաբերյալ, ինպես նաև մասնագիտական հանրության արձագանքների գնահատում՝ նրանց հետաքրքրքրվածությունը Բյուջետային գրասենյակի նկատմամբ պահպանելու և զարգացնելու նպատակով

- Բյուջետային գրասենյակի գործառույթների իրականացման ժամանակ լինել նախաձեռնող,
- Իրականացնել շահառուների կարիքների շարունակական ուսումնասիրություն և դրա արդյունքում նոր արտադրանքների եւ ծառայությունների տրամադրում,
- Ազգային ժողովի և մասնագիտական հանրության կարողությունների զարգացման համատեքստում Բյուջետային գրասենյակի կողմից հանրային ֆինանսների կառավարման ոլորտում Ազգային ժողովի պատգամավորների և նրանց օգնականների, Ազգային ժողովի աշխատակազմի աշխատակիցների և մշտական հանձնաժողովների փորձագետների, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, մասնագիտական հանրության ներկայացուցիչների համար սեմինարների, քննարկումների, կլոր սեղանների և ծրագրային բյուջետավորման ձևաչափի վերաբերյալ դասընթացների կազմակերպում,
- Շահառուների և մասնագիտական հանրության հետ համագործակցության զարգացման նպատակով օգտագործել հանդիպումների՝ անհատական կամ կլոր սեղանների կամ սեմինար քննարկումների ձևաչափը, ինչպես նաև հեռուստատեսության, մամուլի, վեբ կայքի և սոցիալական ցանցերի հնարավորությունները.

<u>Նպատակ 3</u> Բյուջետային գրասենյակի ինստիտուցիոնալ և ներքին կարողությունների զարգացում

Սույն ռազմավարությամբ սահմանված ռազմավարական նպատակի և մյուս նպատակների իրագործման, ինչպես նաև Բյուջետային գրասենյակի գործառույթների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է Բյուջետային գրասենյակի ինստիտուցիոնալ և ներքին կարողությունների զարգացում: Մասնավորապես,

1. **<u>ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում</u>**

1.1. գործառույթների ընդլայնում

1.1.1. Կառավարության կողմից հարկաբյուջետային կանոնների պահպանման նկատմամբ մշտադիտարկման իրականացում և դրա վերաբերյալ տեղեկատվության տրամադրում Ազգային ժողովի պատգամավորներին, խմբակցություններին, մշտական հանձնաժողովներին,

1.1.2. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների և խմբակցությունների կողմից հեղինակած Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման և ծախսերի ավելացման ~~վրա ազդեցության գնահատում՝ **Բյուջետային գրասենյակի չեզոքությունը չխաթարող** խորհրդատվական-վերլուծական տեղեկանքների~~ վերաբերյալ կարծիքների պատրաստում,

1.1.3. Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունների հետհաշվեքննության արդյունքների մշտադիտարկման իրականացում,

1.1.4. Պետական բյուջեի ծախսերի գենդերային ~~ուղվածության~~ զգայունության վերաբերյալ տեղեկանքների պատրաստում:

1.2. լիազորությունների ընդլայնում

1.2.1. Բյուջետային գրասենյակն իր գործառույթների իրականացման նպատակով, անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու և տրամադրելու համար դիմում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց, հիմնարկներին և կազմակերպություններին: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, պաշտոնատար անձինք, հիմնարկներն ու կազմակերպությունները Բյուջետային գրասենյակի հարցումներին պատասխանում է 7-օրյա ժամկետում,

1.2.2. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների և խմբակցությունների կողմից հեղինակած Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման և ծախսերի ավելացման ~~վրա ազդեցության գնահատման~~ վերաբերյալ կարծիքների պատրաստման, ինչպես նաև Բյուջետային գրասենյակի այլ գործառույթների իրականացման համար տեղեկատվություն ստանալու նպատակով կարող է դիմել մասնագիտական հանրությանը,

1.2.3. Առանձին գործառույթների իրականացում Բյուջետային գրասենյակի նախաձեռնությամբ,

1.2.4. Բյուջետային գրասենյակի փորձագետներին իրենց գործառույթների շրջանակներում գաղտնի տեղեկատվության հասանելիության ապահովում՝ Բյուջետային գրասենյակ ներկայացված հարցումը բավարարելու ժամանակահատվածում:

2 **ներքին կարողությունների զարգացում**

2"1" *վերլուծությունների համար մոդելների ձեռքբերում կամ մշակում,*

2 2 Բյուջետային գրասենյակի միացում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության LS Report և այլ տեղեկատվական համակարգերին,

2.3. Adobe Illustrator ծրագրային փաթեթի շարունակական սպասարկում և այլ նոր ծրագրային փաթեթների ձեռքբերում,

2"4" Աշխատակազմի վերապատրաստում, ներառյալ դասընթացների մասնակցություն, ուսուցողական և փորձի փոխանակման այցեր,

2"5"Միջազգային ցանցերում մասնակցություն, այդ թվում՝ Խորհրդարանական Բյուջետային գրասենյակների ՏՀՃԿ, Համաշխարհային Գլոբալ և տարածաշրջանային ցանցերը,

2"6" Բյուջետային գրասենյակի աշխատակազմի թափուր պաշտոնների համալրում վերլուծաբան- մոդելավորողներով Անհրաժեշտության դեպքում աշխատակազմի ընդլայնում,

2"7" Անգլերեն լեզվի խորացված ուսուցում (մասնագիտական ուղղվածությամբ) ,

2"8" Բյուջետային գրասենյակին նոր համակարգչային տեխնիկայի և լրացուցիչ տարածքի տրամադրում:

Ռազմավարության իրականացումը նախատեսվում է պետական և օրենքով չարգելված այլ միջոցների օգտագործմամբ:

Ամփոփաթերթիկ

Ազգային ժողովի բյուջետային գրասենյակի 2020-2023թթ. զարգացման ռազմավարության վերաբերյալ

NN	Առաջարկության հեղինակ	Առաջարկություն	Պարզաբանումներ
1	**Տիգրան Գալստյան** (ՀՀ Աժ աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար)	Բյուջետային գրասենյակի գործառույթներ բաժնում անպայման ներառել՝ առնվազն պատգամավորների կողմից հեղինակած օրենքների նախագծերի վերաբերյալ կարծիք-կանխատեսման տրամադրում բյուջեի միջոցների օգտագործման տեսանակյունից:	Խմբագրվել է հետևյալ բովանդակությամբ. <<Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների և խմբակցությունների կողմից հեղինակած *Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման և ծախսերի ավելացման* (Այս ձևակերպումը կիրառված է Աժ աշխատակարգի 28-րդ կետի 2-րդ ենթակետում) վերաբերյալ ***կարծիքի*** պատրաստում
		Անհասկանալի է զարգացման ռազմավարության ծրագրում 2017-2019 ժամանակաշրջանի հաշվետվությունը (տես էջ 6)	**Ընդունված է:** Կատարողականի նկարագրությունն հանված է:
		Նպատակ 1-ի վերջին կետը անհասկանալի է՝	<<Հայաստանի Հանրապետությունում

		<< Պետական բյուջեի ծախսերի գենդերային ուղվածության վերաբերյալ տեղեկանքների պատրաստում:>>	պետական ֆինանսների քաղաքականության բերեփոխումների ծրագիր>> ԵՄ բյուջետային աջակցության ծրագրի նախապայմաններով սահմանված է, որ 2020 թվականի պետական բյուջեի նախագիծը պետք է ներառի ծրագրային բյուջետավորման մեթոդաբանության շրջանակներում մշակված գենդեռային զգայունություն (gender sensitive) կատարողական ցուցանիշներ, որը բխում է ազգային գենդեռային հավասարության ռազմավարությունից: Բյուջետային գրասենյակի կողմից Պետական բյուջեի ծախսերի գենդեռային ուղվածության վերաբերյալ տեղեկանքների պատրաստումը կապված է վերոնշյալ նախապայմանի իրագործման հետ, բայց քանի որ դեռևս հայտնի չէ նախապայմանի իրագործման ձևաչափը, նախընտրելի է սահմանել <<տեղեկատվության տրամադրում>> ձևաչափը՝ հետագայում այն ճշգրտելու հեռանկարով:
		Կարծում եմ նպատակ 2-ում համագործակցության մեջ կամ 3-ում կարողությունների բարձրացման առումով պետք է ձևակերպվի շահառուների հետ աշխատանքների իրականացման բոլոր գործարար գործընթացների նախագծում և սահմանում: Այլապես առանց	**Ընդունելի է:** Բյուջետային գրասենյակի կողմից Աժ պատգամավորներին, խմբակցություններին և մշտական հանձնաժողովներին տրամադրվող

		ստանդարտացված գործընթացի, ինչպես են շահառուները տեղեկատվություն պահանջում, ստանում, ինչ ժամկետներում, ում կողմից, ինչ ֆորմատով, չի կարող լինել արդյունավետ համագործակցություն:	մասնագիտական տեղեկատվության և աջակցության ընթացակարգերը սահմանված են Ազգային ժողովի աշխատակարգով, ինչպես նաև <<Ազգային ժողովի կանոնակարգ>> ՀՀ օրենքի հավելվածներով: Մասնագիտական հանրության հետ համագործակցության կառուցակարգերը սահմանվել են աշխատանքային պլանում
		Զարգացման ռազմավարության Ժամանակացույցի մասով՝ կարծում եմ ոչ միայն պետք է նշվի տվյալ գործընթացը երբ կսկսվի իրականացվել, այլ նաև որ դեպքերում է դա իրականացվելու կամ ինչ պարբերականությամբ:	**Ընդունելի է: Առանձին գործողությունների համար պարբերականությունները սահմանվել են**
		Զարգացման ռազմավարության Ժամանակացույցում անպայման պետք է ներառվի գործարար գործընթացների դիզայնի նախագծման վերջնաժամկետները, որը պետք է համընկնի գործառույթի իրականացման ժամանակացույցում նշված սկզբի հետ:	**Ընհանուր առմամբ ընդունելի է, Կիսամյակային պարբերաշրջանները սահմանվել են գործողությունների համար որոշակի ճկունություն ապահովելու նպատակով**

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ 2020-2023 ԹԹ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Ռազմավարական նպատակ

Գործառութային անկախությամբ և ինքնավարությամբ օժտված արդյունավետ գործող Բյուջետային գրասենյակ, որն անկողմնակալ և մասնագիտական տեղեկատվություն ու աջակցություն կտրամադրի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներին, խմբակցություններին, մշտական հանձնաժողովներին՝ նպաստելով հանրային ֆինանսների կառավարման արդյունավետության, վերահսկողության ու թափանցիկության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև ակտիվ համագործակցության մեջ կլինի մասնագիտական հանրության հետ

Նպատակ 1. Արտադրանքներ և ծառայություններ (Products & Services)

Շահառուներին տրամադրվող արտադրանքների և մատուցվող ծառայությունների որակի էլ ավելի բարելավում, Ազգային ժողովում գիտակցված պահանջարկով պայմանավորված նոր պարզ, հստակ, բովանդակալից, ինֆոգրաֆիկաներ, ինչպես նաև Բյուջետային գրասենյակի չեզոքությունը չխաթարող վերլուծական (Ըստ <<Ուեսթմինսթեր հիմնադրամը հանուն ժողովրդավարության>> կազմակերպության միջազգային փորձագետների, ցանկացած այդպիսի վերլուծություն պետք է քաղաքական առումով չեզոք լինի և չպետք է պարունակի տնտեսական կանխատեսումներ կամ կարծիքներ) ու խորհրդատվական տարբեր պարունակող ամփոփ նկարագրերի և տեղեկանքների պատրաստում, հանրային ֆինանսների ոլորտում Ազգային ժողովի և անհրաժեշտության դեպքում մասնագիտական հանրության կարողությունների զարգացում

NN	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	ԺԱՄԿԵՏ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ	ԸՆԹԱՑՔ
1	Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հարկաբյուջետային կանոների պահպանման վերաբերյալ տեղեկանքների պատրաստում	Մշտադիտարկման իրականացում և տեղեկատվության տրամադրում Ազգային ժողովի պատգամավորներին, խմբակցություններին և մշտական հանձնաժողովներին: Մշտադիտարկումն իրականացվում է պաշտոնական տեղեկատվության հիման վրա, այդ թվում՝ պետական կառավարման մարմիններից ստացված տեղեկատվության հիման վրա: Տեղեկանքները տրամադրվում են ըստ հարցման կամ Բյուջետային գրասենյակի նախաձեռնությամբ ամիսը մեկ	***2020թ. երկրորդ կեսից***	Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ	

2	Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների և խմբակցությունների կողմից հեղինակած Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման և ծախսերի ավելացման վերաբերյալ Բյուջետային գրասենյակի չեզոքությունը չխաթարող կարծիքի պատրաստում	Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների և խմբակցությունների կողմից հեղինակած Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման և ծախսերի ավելացման վերաբերյալ Բյուջետային գրասենյակի չեզոքությունը չխաթարող կարծիքի պատրաստում՝ հարցումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում:	***2022թ. սկսված***	Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ	
3	Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացություններից բխող հետհաշվեքննության վերաբերյալ տեղեկանքների տրամադրում	Հաշվեքնիչ պալատի ընթացիկ եզրակացություններում ներառված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերացման և առաջարկությունների իրացման նկատմամբ հաշվեքննության օբյեկտի կողմից կատարվող աշխատանքների մշտադիտարկում /տեղեկատվության հավաքում/,ստացված տեղեկատվության վերլուծություն և տեղեկանքների պատրաստում ու տրամադրում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին: Տեղեկատվությունը տրամադրվում է հարցման մեջ առկա պարբերականությամբ, բայց ոչ շուտ քան ամիսը մեկ: Մշտադիտարկման իրականացումն ու տեղեկատվության տրամադրումը դադարեցվում է հարցումը ներկայացնողի պահանջով կամ ընթացիկ բյուջետային տարվա ավարտին	***2020թ. երկրորդ կեսից***	Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ	

4	Շահառուներին տրամադրվող պարզ, մատչելի, բովանդակալից տեղեկատվություն և ինֆոգրաֆիկաներ պարունակող ամփոփ նկարագրերի և տեղեկանքների շարունակական կատարելագործում	Տեղեկանքներ՝ 1. Պետական բյուջեի եկամուտների վերաբերյալ, 2. Պետական բյուջեի ծախսերի, այդ թվում՝ կապիտալ ծախսերի վերաբերյալ, 3. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ, 4. Հայաստանի Հանրապետության հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշների և դրամական փոխանցումների վերաբերյալ, 5. Բյուջետային ծրագրերի կատարողական ցուցանիշների վերաբերյալ, 6. Պետական բյուջեի ծախսերի և ՄԺԾԾ փոխկապակցվածության վերաբերյալ, 7. Բյուջետային ծրագրերի, միջոցառումների և դրանց կատարողական ոչ ֆինանսական ցուցանիշների բարելավմանն/մշակմանն աջակցություն, Հանրային ֆինանսների վերաբեյալ, այդ թվում՝ ծրագրային բյուջետավորման վերաբերյալ կլոար սեղանների, սեմինարների, աշխատաժողովների և դասընթացների կազմակերպում... Տեղեկանքները տրամադրվում են ի պատասխան հարցումների կամ Բյուջետային գրասենյակի սեփական նախաձեռնությամբ	***2020-2023թթ***	Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ	
5	Պետական բյուջեի կատարման վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության տրամադրում Ազգային ժողովի պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին և խմբակցություններին	Ինտերակտիվ բյուջե, Ls Finance և LS Report համակարգերի օգտագործում: Տեղեկանքները տրամադրվում են ի պատասխան հարցումների կամ Բյուջետային գրասենյակի սեփական նախաձեռնությամբ	***2020-2023թթ***	Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ	
6	Պետական բյուջեի ծախսերի գենդերային զգայունության վերաբերյալ տեղեկանքների պատրաստում	Կլաստերների վրա հիմնված վերլուծություն	***2023թ.***	Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ	

Նպատակ 2. Շահառուներ և համագործակցություն

Շահառուների կարիքների, նրանց տրամադրվող արտադրանքների ու ծառայությունների վերաբերյալ, ինպես նաև մասնագիտական հանրության արձագանքների գնահատում՝ նրանց հետաքրքրքրվածությունը Բյուջետային գրասենյակի նկատմամբ պահպանելու և զարգացնելու նպատակով

NN	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	ԺԱՄԿԵՏ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ	ԸՆԹԱՑՔ
1	Բյուջետային գրասենյակի գործառույթների իրականացման ժամանակ լինել նախաձեռնող	Բյուջետային գրասենյակի կողմից սեփական նախաձեռնությամբ արտադրանքների և ծառայությունների տրամադրում շահառուներին	***2020թ. երկրորդ կեսից***	Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ	
2	Իրականացնել շահառուների կարիքների շարունակական ուսումնասիրություն և դրա արդյունքում նոր արտադրանքների եւ ծառայությունների տրամադրում	1. Անհատական հանդիպումներ (Ըստ անհրաժեշտության), 2. Հարցումներ (եռամսյակը մեկ), 3. Կլոր սեղանների և աշխատաժողովների կազմակերպում (Ըստ անհրաժեշտության)	***2020-2023թթ***	Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ	
3	Ազգային ժողովի և մասնագիտական հանրության կարողությունների զարգացման համատեքստում Բյուջետային գրասենյակի կողմից հանրային ֆինանսների կառավարման ոլորտում Ազգային ժողովի պատգամավորների և նրանց օգնականների, Ազգային ժողովի աշխատակազմի աշխատակիցների և մշտական հանձնաժողովների փորձագետների, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, մասնագիտական հանրության ներկայացուցիչների համար սեմինարների, քննարկումների, կլոր սեղանների և ծրագրային բյուջետավորման ձևաչափի վերաբերյալ դասընթացների կազմակերպում	Ազգային ժողովի և մասնագիտական հանրության կարողությունների զարգացման համատեքստում Բյուջետային գրասենյակի կողմից հանրային ֆինանսների կառավարման ոլորտում Ազգային ժողովի պատգամավորների և նրանց օգնականների, Ազգային ժողովի աշխատակազմի աշխատակիցների և մշտական հանձնաժողովների փորձագետների, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում (Աժ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի հարցման հիման վրա կամ Բյուջետային գրասենյակի սեփական նախաձեռնությաբ), մասնագիտական հանրության ներկայացուցիչների համար սեմինարների, քննարկումների, կլոր սեղանների և ծրագրային բյուջետավորման ձևաչափի վերաբերյալ դասընթացների կազմակերպում	***2020-2023թթ***	Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ	

4	Շահառուների և մասնագիտական հանրության հետ համագործակցության զարգացման նպատակով օգտագործել հանդիպումների՝ անհատական կամ կլոր սեղանների կամ սեմինար քննարկումների ձևաչափը, ինչպես նաև հեռուստատեսության, մամուլի, վեբ կայքի և սոցիալական ցանցերի հնարավորությունները	Շահառուների և մասնագիտական հանրության հետ համագործակցության զարգացման նպատակով օգտագործել ըստ անհրաժեշտության, հանդիպումների՝ անհատական կամ կլոր սեղանների կամ սեմինար քննարկումների ձևաչափը, ինչպես նաև հեռուստատեսության, մամուլի, վեբ կայքի և սոցիալական ցանցերի հնարավորությունները	***2020-2023թթ***	Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ	

Նպատակ 3. Բյուջետային գրասենյակի ինստիտուցիոնալ և ներքին կարողությունների զարգացում

Ռազմավարությամբ սահմանված ռազմավարական նպատակի և մյուս նպատակների իրագործման, ինչպես նաև Բյուջետային գրասենյակի գործառույթների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է Բյուջետային գրասենյակի ինստիտուցիոնալ և ներքին կարողությունների զարգացում

NN	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	ԺԱՄԿԵՏ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ	ԸՆԹԱՑՔ
1. Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում					
1.1	***Գործառույթների ավելացում***				
1.1.1	Կառավարության կողմից հարկաբյուջետային կանոնների պահպանման նկատմամբ մշտադիտարկման իրականացում և դրա վերաբերյալ տեղեկատվության տրամադրում Ազգային ժողովի պատգամավորներին, խմբակցություններին, մշտական հանձնաժողովներին	Ազգային ժողովի աշխատակարգում համապատասխան լրացումների և փոփոխությունների մասին Ազգային ժողովի որոշման նախագծի մշակում և շրջանառության մեջ ներկայացում	***2020թ. առաջին կես***	Ազգային ժողովի պատգամավորներ, Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ	
		Ազգային ժողովի աշխատակարգում համապատասխան լրացումների և փոփոխությունների մասին Ազգային ժողովի որոշման ընդունում	***2020թ. երկրորդ կես***	Ազգային ժողով	

1.1.2	Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների և խմբակցությունների կողմից հեղինակած Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման և ծախսերի ավելացման վերաբերյալ Բյուջետային գրասենյակի չեզոքությունը չխաթարող կարծիքի պատրաստում,	Ազգային ժողովի աշխատակարգում համապատասխան լրացումների և փոփոխությունների մասին Ազգային ժողովի որոշման նախագծի մշակում և շրջանառության մեջ ներկայացում	***2021թ. առաջին կես***	Ազգային ժողովի պատգամավորներ, Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ	
		Ազգային ժողովի աշխատակարգում համապատասխան լրացումների և փոփոխությունների մասին Ազգային ժողովի որոշման ընդունում	***2021թ. երկրորդ կես***	Ազգային ժողով	
1.1.3	Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունների հետհաշվեքննության արդյունքների մշտադիտարկման իրականացում	Ազգային ժողովի աշխատակարգում համապատասխան լրացումների և փոփոխությունների մասին Ազգային ժողովի որոշման նախագծի մշակում և շրջանառության մեջ ներկայացում	***2020թ. առաջին կես***	Ազգային ժողովի պատգամավորներ, Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ	
		Ազգային ժողովի աշխատակարգում համապատասխան լրացումների և փոփոխությունների մասին Ազգային ժողովի որոշման ընդունում	***2020թ. երկրորդ կես***	Ազգային ժողով	
1.1.4	Պետական բյուջեի ծախսերի գենդերային զգայունության վերաբերյալ տեղեկանքների պատրաստում	Ազգային ժողովի աշխատակարգում համապատասխան լրացումների և փոփոխությունների մասին Ազգային ժողովի որոշման նախագծի մշակում և շրջանառության մեջ ներկայացում	***2022թ. երկրորդ կես***	Ազգային ժողովի պատգամավորներ, Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ	
		Ազգային ժողովի աշխատակարգում համապատասխան լրացումների և փոփոխությունների մասին Ազգային ժողովի որոշման ընդունում	***2023թ. առաջին կես***	Ազգային ժողով	
1.2	***Լիազորությունների ավելացում***				

1.2.1	Բյուջետային գրասենյակն իր գործառույթների իրականացման նպատակով, անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու և տրամադրելու համար դիմում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց, հիմնարկներին և կազմակերպություններին:	Ազգային ժողովի աշխատակարգում համապատասխան լրացումների և փոփոխությունների մասին Ազգային ժողովի որոշման նախագծի մշակում և շրջանառության մեջ ներկայացում	***2020թ. առաջին կես***	Ազգային ժողովի պատգամավորներ, Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ	
	Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, պաշտոնատար անձինք, հիմնարկներն ու կազմակերպությունները Բյուջետային գրասենյակի հարցումներին պատասխանում է 7-օրյա ժամկետում	Ազգային ժողովի աշխատակարգում համապատասխան լրացումների և փոփոխությունների մասին Ազգային ժողովի որոշման ընդունում	***2020թ. երկրորդ կես***	Ազգային ժողով	
	Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների և խմբակցությունների կողմից հեղինակած Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի	Ազգային ժողովի աշխատակարգում համապատասխան լրացումների և փոփոխությունների մասին Ազգային ժողովի որոշման նախագծի մշակում և շրջանառության մեջ ներկայացում	***2021թ. առաջին կես***	Ազգային ժողովի պատգամավորներ, Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ	

1.2.2	եկամուտների էական նվազեցման և ծախսերի ավելացման վրա ազդեցության գնահատման, ինչպես նաև Բյուջետային գրասենյակի այլ գործառույթների իրականացման համար տեղեկատվություն ստանալու նպատակով կարող է դիմել մասնագիտական հանրությանը	Ազգային ժողովի աշխատակարգում համապատասխան լրացումների և փոփոխությունների մասին Ազգային ժողովի որոշման ընդունում	***2021թ. երկրորդ կես***	Ազգային ժողով	
1.2.3	Առանձին գործառույթների իրականացում Բյուջետային գրասենյակի նախաձեռնությամբ	Ազգային ժողովի աշխատակարգում համապատասխան լրացումների և փոփոխությունների մասին Ազգային ժողովի որոշման նախագծի մշակում և շրջանառության մեջ ներկայացում	***2020թ. առաջին կես***	Ազգային ժողովի պատգամավորներ, Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ	
		Ազգային ժողովի աշխատակարգում համապատասխան լրացումների և փոփոխությունների մասին Ազգային ժողովի որոշման ընդունում	***2020թ. երկրորդ կես***	Ազգային ժողովի	
1.2.4	Բյուջետային գրասենյակի աշխատակազմին իրենց գործառույթների շրջանակներում գաղտնի տեղեկատվության հասնելիության ապահովում	Բյուջետային գրասենյակի աշխատակազմին իրենց գործառույթների շրջանակներում գաղտնի տեղեկատվության հասնելիության ապահովում՝ Բյուջետային գրասենյակ ներկայացված հարցումը բավարարելու ժամանակահատվածում	***2020թ. առաջին կես***	Ազգային ժողովի աշխատակազմ	
2. Ներքին կարողությունների զարգացում					
2.1	Վերլուծությունների համար մոդելների ձեռքբերում կամ կազմում	Վերլուծությունների համար մոդելների ձեռքբերում կամ կազմում	***2020թ. երկրորդ կես***	1. Ազգային ժողովի աշխատակազմ, 2. Միջազգային կազմակերպություններ	

2.2	Բյուջետային գրասենյակի միացում ՀՀ ֆինանսների նախարարության LS Report և այլ անհրաժեշտ տեղեկատվական համակարգերին	ՀՀ ֆինանսների նախարարության LS Report համակարգի փաթեթի ձեռքբերում	***2020թ. առաջին կես***	1. ՀՀ ֆինանսների նախարարություն, 2. Ազգային ժողովի աշխատակազմ, 3. Բյուջետային գրասենյակ	LS Report համակարգը միացված է ընթացքում
2.3	Adobe Illustrator ծրագրային փաթեթի շարունակական սպասարկում և այլ նոր ծրագրային փաթեթների ձեռքբերում	Adobe Illustrator ծրագրային փաթեթի շարունակական սպասարկում և այլ նոր ծրագրային փաթեթների ձեռքբերում	***2020թ. սկիզբ***	1. Ազգային ժողովի աշխատակազմ, 2. Միջազգային կազմակերպություններ	

2.4	Աշխատակազմի վերապատրաստում, ներառյալ դասընթացների մասնակցություն, ուսուցողական և փորձի փոխանակման այցեր,	1. աշխատակազմի վերապատրաստում, ներառյալ դասընթացների մասնակցություն (պետական պարտքի վերլուծությունը, կատարողական և գենդերային բյուջետավորում և վերլուծություն, բյուջետային ծրագրերի վերլուծությունը, պետական ֆինանսական կառավարում, հարկաբյուջետային քաղաքականություն եւ հարկաբյուջետային կանոնները, միջնաժամկետ բյուջետավորումը, պետեկան բյուջեի վրա օրենքների ազդեցության գնահատում, մոդելավորում և այլն), 2. ուսուցողական և փորձի փոխանակման այցեր տարբեր երկրների Բյուջետային գրասենյակներ	***2020-2023թթ***	1. Ազգային ժողովի աշխատակազմ, 2. Միջազգային կազմակերպություններ	
2.5	Միջազգային ցանցերում մասնակցություն, այդ թվում՝ Խորհրդարանական Բյուջետային գրասենյակների ՏՀԶԿ, Համաշխարհային Գլոբալ և տարածաշրջանային ցանցերը,	Բյուջետային գրասենյակների ՏՀԶԿ եւ Համաշխարհային Գլոբալ, ինչպես նաև տարածաշրջանային ցանցերի միացում և դրանց կողմից կազմակերպվող համաժողովներին և այլ միջոցառումներին մասնակցություն	***2020-2023թթ***	1. Ազգային ժողովի աշխատակազմ, 2. Բյուջետային գրասենյակ, 3. Միջազգային կազմակերպություններ	

2.6	Բյուջետային գրասենյակի աշխատակազմի թափուր պաշտոնների համալրում վերլուծաբան- մոդելավորողներով, անհրաժեշտության դեպքում աշխատակազմի ընդլայնում	Ազգային ժողովի նախագահի կարգադրությամբ Բյուջետային գրասենյակի փորձագետների պաշտոնի նկարագրում համապատասխան փոփոխությունների իրականացում	***2020թ. առաջին կես***	1. Ազգային ժողովի աշխատակազմ, 2. Բյուջետային գրասենյակ	
		Բյուջետային գրասենյակի փորձագետների թափուր հաստիքներում մրցույթով փորձագետների ընտրություն	***2020թ. երկրորդ կես***	1. Ազգային ժողովի աշխատակազմ, 2. Բյուջետային գրասենյակ	
		Բյուջետային գրասենյակի փորձագետների թվաքանակի ավելացում	***2022թ. առաջին կես***	1. Ազգային ժողովի աշխատակազմ, 2. Բյուջետային գրասենյակ	
2.7	Անգլերեն լեզվի ուսուցում	Դասընթացներին մասնակցություն	***2020-2023թթ***	1. Ազգային ժողովի աշխատակազմ, 2. Միջազգային կազմակերպություններ	
2.8	Բյուջետային գրասենյակին նոր համակարգչային տեխնիկայի և լրացուցիչ տարածքի տրամադրում	Բյուջետային գրասենյակին նոր համակարգչային տեխնիկայի և լրացուցիչ տարածքի տրամադրում	***2020թ. առաջին կես***	1. Ազգային ժողովի աշխատակազմ, 2. Միջազգային կազմակերպություններ	ՀՀ ԱԺ աշխատակազմի կողմից Բյուջետային գրասենյակին են տրամադրվել 2 նոր համակարգիչ